ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2019, հ. 72, N 1, 3-9
Известия НАН РА Науки о Земле, 2019, т. 72, N 1, 3-9
Proceedings NAS RA, Earth Sciences, 2019, v. 72, 1, 3-9

Ա.Տ.ԱՍԼԱՆՅԱՆ՝ ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԳԻՏՆԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ[x)]

2019թ. Մելքոնյան Ռ.Լ.

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
0019 Երևան, Մարշալ Բաղրամյանի պ. 24ա, ՀՀ
e-mail: ramelk@sci.am
Հանձնված է խմբագրություն 08.02.2019 թ.

Ներկայացված են ակադեմիկոս Ա.Տ. Ասլանյանի գիտական և պետական գործունեության հիմնական փուլերը, կապված ծննդյան 100-ամյա տարեդարձի հետ:

Շեշտադրված են նրա ձեռքբերումները ռեգիոնալ երկրաբանության և տեկտոնիկայի, մեծ երկրաֆիզիկայի և մոլորակագիտության բնագավառներում, բերվում են պետական կառույցներում Ա.Տ. Ասլանյանի գործունեության վերաբերյալ տեղեկություններ:

Հանգուցային բառեր՝ բազմավաստակ գիտնական, պետական գործիչ, քաղաքացի

ՀՀ ԳԱԱ մեծարգո նախագահ, հարգելի հյուրեր և գործընկերներ: Այսօր մենք նշում ենք ակադեմիկոս Ա.Տ.Ասլանյանի ծննդյան 100-ամյա տարեդարձը, գիտնականի, որը իր պատվավոր տեղն է զբաղեցնում հայրենական գիտության երախտավորների շարքում: Տպավորիչ է նրա կյանքի ու գործունեության հիմնական փուլերի սոսկ թվարկումը: 1941թ. ավարտել է ԵՊՀ Երկրաբանական ֆակուլտետը և մեկնել ռազմաճակատ, 1941-1943թթ. մասնակցել է Հայրենական Մեծ պատերազմին, 1943թ. ծանր վիրավորվել և զորացրվել է բանակից, 1945-1954թթ. Երկրաբանական գիտությունների ինստիտուտի (ԵԳԻ) ասպիրանտ, գիտաշխատող, իր նախաձեռնությամբ կազմակերպված Ռեգիոնալ երկրաբանության սեկտորի վարիչ, 1954-1965թթ. Հայաստանի Երկրաբանական վարչության գլխավոր ինժեներ, ապա պետ, 1965-1966թթ. Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր, 1966-1975թթ. բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստր, 1975-1987թթ. ԵԳԻ տնօրեն: 1965թ. ընտրվել է Հայաստանի ԳԱ թղթ. անդամ, 1986թ. ակադեմիկոս: Արդեն նրա թեկնածուական ատենախոսությունը՝ «Стратиграфия юрских отложений Северной Армении», որը պաշտպանվեց 1947թ. և հրատարակվեց 1949թ., վկայում էր՝ ասպարեզ է եկել չափազանց խոստումնալից գիտնական, և Ա.Տ.Ասլան-

[x)] Զեկուցում ակադեմիկոս Ա.Տ.Ասլանյանի 100-ամյակին նվիրված գիտաժողովում (Երևան, 07.02.2019թ.)

յանի հետագա գիտական գործունեությունը դարձավ դրա համոզիչ ապացույցը:

1957թ. Մոսկվայում ԽՍՀՄ ԳԱ Երկրաբանական ինստիտուտում նա փայլուն պաշտպանեց «Региональная геология Армении» դոկտորական ատենախոսությունը, որը 1958թ. հրատարակվեց որպես մենագրություն և լայն ճանաչում ստացավ տարբեր երկրների մասնագետների շրջանում: Ակադեմիկոս Կ.Ն.Պաֆֆենհոլցի «Геология Армении» ֆունդամենտալ մենագրությունից հետո, որը լույս էր տեսել դրանից տաս տարի առաջ՝ 1948թ., դա երկրորդ և մինչ օրս միակ մենագրությունն է, որում նորագույն տվյալների հիման վրա պարզաբանվեցին Հայաստանի և հարակից շրջանների երկրաբանության առաջնահերթ հիմնահարցերը: Անցել է ավելի քան 60 տարի, բայց այդ կապիտալ մենագրությունը չի կորցրել իր նշանակությունը:

Ա.Տ.Ասլանյանը չափազանց բազմակողմանի գիտնական էր, և այդ տեսակետից, վստահորեն կարելի է ասել, որ նա բացառիկ երևույթ էր հայրենական երկրաբանությունում: Շերտագրություն և հնէաբանություն, ռեգիոնալ երկրաբանություն և տեկտոնիկա, սեյսմատեկտոնիկա և մեծ երկրաֆիզիկա, մագմայականություն և նորագույն հրաբխականություն, մոլորակագիտություն և մետաղագոյացում, չորրորդական երկրաբանություն և ինժեներային երկրաբանություն՝ ահա նրա գիտական հետաքրքրությունների շրջանակները: Եվ այս բոլորը խորը մասնագիտական մակարդակով:

Ա.Տ. Ասլանյանի գիտական հետաքրքրությունների շարքում գոյություն ունեին մի քանի ուղղություններ, որոնց նա տալիս էր իր նախապատվությունը: Դրանք էին՝ ռեգիոնալ երկրաբանությունը և տեկտոնիկան, մեծ երկրաֆիզիկան և մոլորակագիտությունը: Եվ այս բնագավառներում նա ասել է իր նոր, ծանրակշիռ խոսքը: Այդ տեսանկյունից նշենք առաջին անգամ Հայաստանի տարածքում կիմերյան գրանիտոիդային մագմայականության առկայության բացահայտումը և հիմնավորումը, Հայաստանի մետաղային հանքավայրերի ֆորմացիոն առաջին դասակարգումը, օռոտեկտոնական ձևափոխումների և համապատասխան ստրուկտուրային հարկերի անջատումը: Ա.Տ.Ասլանյանը կազմել է առանձին շրջանների խոշոր մասշտաբի երկրաբանական քարտեզներ, Հայաստանի 1:500000 մասշտաբի երկրաբանական քարտեզ (1958թ.), Հայաստանի 1:600000 մասշտաբի երկրաբանական և տեկտոնական քարտեզներ (1970թ.) Ա.Տ.Վեհունու համահեղինակությամբ: Ա.Տ.Ասլանյանը բազմիցս շեշտադրում էր հիմնարար հետազոտությունների առաջնային նշանակությունը կիրառական խնդիրների լուծման գործում:

Բնականից հակում ունենալով դեպի ճշգրիտ գիտությունները, Ա.Տ. Ասլանյանն աշխատում էր օգտագործել մաթեմատիկայի, մեխանիկայի, ֆիզիկայի հնարավորությունները և ձեռքբերումները երկրաբանության կարևորագույն պրոբեմների քննարկման ընթացքում: Այդ տեսանկյունից նշեմ “Исследование по тектонической деформации Земли”

(1955г.) և “Основы количественной теории магнитного поля Земли” (1962г.) մենագրությունները, որոնք մեծ հետաքրքրություն առաջացրեցին տեսաբանների շրջանում:

Չափազանց կարևոր էին Ա.Տ.Ասլանյանի տեսական աշխատանքները, որոնք գտնվում էին մեծ երկրաֆիզիկայի և մոլորակագիտության սահմանագծում (“Большие изменения внутреннего объема и полярного сжатия Земли и их тектонические последствия”, 1983 и др.): Այդ աշխատանքներում տրվեցին լիթոսֆերայի ֆիզիկա-մեխանիկական բնութագրերի քանակական գնահատականները, երկրի միջուկի, կեղևի խտության և մասսայի հաշվարկային մեծությունները: Հարկ է հատուկ նշել Երկրի ձևի, ծավալի և միջին տեսակարար կշռի էվոլյուցիայի հաշվարկային որոշումները նրա գոյության 4.5 մլրդ տարիների ընթացքում: ԽՍՀՄ ԳԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Ա.Յանշինը Ա.Տ.Ասլանյանին ուղղված նամակում (1984թ.) մասնավորապես նշում էր. «…Вы в этой своей статье и в предшествующих подняли ряд очень важных для каждого геолога вопросов, лежащих на стыке тектоники, геофизики и небесной механики… Вы уверенно доказываете эволюцию формы, объема и среднего удельного веса вещества Земли за 4.5 млрд лет ее существования, причем приведенным Вами расчетам трудно что-либо противопоставить… Ваши расчеты безукоризнены. Я показывал Вашу статью академику В.А.Магницкому, который гораздо лучше меня знает физику и математику, и он не нашел возможным к чему-нибудь придраться в Ваших аргументах.» Եվ պատահական չէր, որ այդ աշխատանքներից հետո Ա.Տ. Ասլանյանը երկու անընդմեջ ժամկետ ընտրվեց Մոլորակագետների միջազգային ասոցիացիայի փոխպրեզիդենտ:

Ա.Տ.Ասլանյանի տեսական հետազոտությունների շարքում առանձնակի տեղ է զբաղեցնում նրա «К аксиоматике геологической науки» աշխատանքը (1980): Ձևակերպելով երկրաբանության աքսիոմատիկ սկզբունքները, նա կոչ էր անում տեսաբան-գիտնականներին ուշադրությունը բևեռել սահմանափակիչ չափանիշների մշակման անհրաժեշտության վրա, երկրաբանության դասական սկզբունքները օգտագործել միայն նկատի ունենալով ռելյատիվիստական պատկերացումները, ընդգծելով և հիմնավորելով թերմոդինամիկայի և մեխանիկայի որոշ մասնավոր սկզբունքների օգտագործման անհրաժեշտությունը երկրաբանությունում: Այդ աշխատանքը չափազանց մեծ հետաքրքրություն առաջացրեց տեսաբանների, առանձնապես արտասահմանի գիտնականների շրջանում, որոնք դիմում էն Ա.Տ.Ասլանյանին խնդրանքով ուղարկել հոդվածի լրիվ տարբերակը:

Ա.Տ.Ասլանյանը ավելի քան 12 տարի (1975-1987թթ.) գլխավորեց ԵԳԻ: Այդ տարիներին ինստիտուտում զգալի թափ ստացան հիմնարար հետազոտությունները, կազմակերպվեցին մի շարք նոր բաժիններ՝ տեկտոնիկայի, ինժեներային երկրաբանության և ջրաերկրաբանության, մետաղագոյացման, իզոտոպային հետազոտությունների,

մաթեմատիկական մեթոդների օգտագործման, լայն զարգացում ստացավ Երկրի տիեզերական զոնդավորման արդյունքների օգտագործումը երկրաբանական հետազոտությունների ընթացքում: Ընդարձակվեցին կապերը և համատեղ աշխատանքները միութենական ակադեմիայի ինստիտուտների հետ: Մոսկվայի Վ.Մ. Լոմոնոսովի անվան Պետական համալսարանի հետ համատեղ կազմվեց և հրատարակվեց (1984թ.) «Космотектоническая карта Кавказа, Ближнего и Среднего Востока» 1:5000000 մասշտաբի, որը ներկայացվեց 1984թ. XXVII Միջազգային Երկրաբանական կոնգրեսում:

Ա.Տ.Ասլանյանի մոտ ցայտուն կերպով արտահայտված էր քաղաքացիական պատասխանատվության զգացումը: Ա.Տ. Ասլանյանը տվել է շուրջ 200 եզրակացություններ տարբեր ինժեներական կառույցների, այդ թվում ջրամբարների, պատվարների, թունելների, գործարանների, բնակելի զանգվածների շինարարության երկրաբանական պայմանների վերաբերյալ: Ա.Տ. Ասլանյանն անձամբ գլխավորեց ինստիտուտի աշխատանքները Հայաստանի կառավարության կարևոր հանձնարարության՝ «Инженерно-геологическое районирование территории г. Дилижан в М 1:5000» կապված քաղաքի գլխավոր հատակագծի մշակման և սողանքային երևույթների դեմ պայքարի հետ: Այդ աշխատանքների արդյունքները քննարկվեցին Մոսկվայում միութենական Պետշին-ում, ընդունվեցին բարձր գնահատականով և առաջարկվեցին որպես օրինակ ԽՍՀՄ-ի լեռնային այլ տարածքների համար:

Ա.Տ.Ասլանյանը, չնայած նրա վրա գործադրված ճնշումներին, չմիացավ ՀԱԿ կանգնեցման պահանջներին: Ընդհակառակը՝ նա ջանում էր բացատրել ատոմակայանի կանգնեցման արդյունքում սպասվող աղետալի հետևանքները, սակայն ապարդյուն:

Ա.Տ.Ասլանյանի տնօրինության տարիներին զգալիորեն ընդլայնվեցին կապերը ինստիտուտի և արտադրական կազմակերպությունների՝ Մինիստրների խորհրդի Երկրաբանական վարչության, Գունավոր մետալուրգիայի վարչության Արտադրական երկրաբանա-հետախուզական տրեստի հետ, որոնց պատվերով կատարվեցին բազմաթիվ կարևոր, կիրառական նշանակություն ունեցող աշխատանքներ: Կարելի է առանց չափազանցնելու ասել, որ այդ տարիները ինստիտուտի բազմակողմանի գործունեության ամենաբեղմնավոր տարիներից էին: Դրա ապացույցը եղավ 1985թ. ինստիտուտի պարգևատրումը «Աշխատանքային Կարմիր Դրոշի» շքանշանով:

Ինստիտուտում աշխատելու տարիները չափազանց բեղմնավոր էին և անձամբ Ա.Տ.Ասլանյանի համար: Նրա շուրջ 200 գիտական հոդվածների և 9 մենագրությունների մեծ մասը գրվել են ինստիտուտում աշխատելու տարիներին: Այդ շարքում նշեմ նրա վերջին մենագրությունը՝ “История тектонического развития Тавро-Кавказской области” (1984г.), որում ռեգիոնալ տեկտոնական զարգացման հարցերը շարադրված էին ինչպես ֆիքսիզմի, այնպես էլ մոբիլզմի դիրքերից:

Ա.Տ.Ասլանյանի կյանքի և գործունեության կարևոր էտապներից էր նրա աշխատանքը պետական կառույցներում: Հենց այստեղ առավել ցայտուն դրսևորվեցին նրա կազմակերպչական մեծ կարողությունները: 11 տարի նա աշխատեց Հայաստանի Մինիստրների խորհրդի Երկրաբանական վարչությունում նախ որպես գլխավոր ինժեներ (1954-1961թթ.), ապա վարչության պետ (1961-1965թթ.): Այդ տարիներին զգալիորեն ամրապնդվեց և կատարելագործվեց հանրապետության երկրաբանական ծառայությունը, ընդարձակվեց երկրի հանքահումքային բազան, ավարտվեցին Սոտքի ոսկու, Ագարակի Cu-Mo, Հրազդանի երկաթի հանքավայրերի, Ջերմուկի, Արզնու, Հանքավանի հանքային ջրերի, մի շարք ոչ մետաղային օգտակար հանածոների հանքավայրերի մանրակրկիտ ուսումնասիրությունները, որոնք հիմք հանդիսացան նրանց պաշարների հաշվարկման և հաստատման համար: Ա.Տ. Ասլանյանի անձնական նախաձեռնությամբ սկսվեցին բենտոնիտների և պեռլիտների ունիկալ հանքավայրերի հետախուզական աշխատանքները, որոնց բազայի վրա հետագայում կառուցվեցին Իջևանի և Արագածի կոմբինատները: Երկրաբանական վարչությունում առաջ քաշվեցին երիտասարդ մասնագետները, զգալիորեն ընդլայնվեցին թեմատիկ աշխատանքները, բարձրացավ երկրաբանահանութային աշխատանքների որակը, մշակվեցին ծրագրեր խորքային ջերմության օգտագործման, բնական կոլեկտորներում գազի ստորերկրյա պահեստարանների ստեղծման, գլխավոր հանքային շրջաններում խորը պարամետրիկ հորատանցքերի հորատման վերաբերյալ:

Այդ տարիներին Ա.Ասլանյանի ղեկավարությամբ և համահեղինակությամբ Մոսկվայում լույս տեսավ «Геология СССР» բազմահատորյակի XLIII հատորը նվիրված Հայաստանին՝ «Геологическое описание» (1970թ.), «Полезные ископаемые» (1974թ.):

Ա.Տ.Ասլանյանի գործունեության մի այլ կարևոր ոլորտ հանդիսացավ բարձրագույն դպրոցը: 1965թ. նա նշանակվեց Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր: Նկատի ունենալով Հանրապետության արագ զարգացող լեռնա-մետալուրգիական կոմպլեքսի պահանջները՝ Ա.Տ.Ասլանյանի նախաձեռնությամբ ինստիտուտում կազմակերպվեց լեռնա-մետալուրգիական ֆակուլտետ, սեյսմատեկտոնիկայի պրոբլեմային լաբորատորիա, որը նա գլխավորում էր շուրջ 10 տարի, միաժամանակ ղեկավարելով «Ընդհանուր և ռեգիոնալ երկրաբանության» ամբիոնը:

1966թ. Ա.Տ.Ասլանյանը նշանակվեց բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստր և 10 տարի աշխատեց այդ պատասխանատու պաշտոնում: Նա մեծ ավանդ ունի բարձրագույն դպրոցի նյութատեխնիկական բազայի ամրապնդման, բուհերում գիտահետազոտական և կոնստրուկտորային աշխատանքների ընդլայնման, մի շարք նոր ֆակուլտետների, ամբիոնների և լաբորատորիաների կազմակերպման գործում: Շուրջ 40 տարի Ա.Տ.Ասլանյանը վարում էր դասախոսական գործունեություն՝ լինելով ԵՊՀ-ի, ապա Պոլիտեխնիկա-

կան ինստիտուտի պրոֆեսոր: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 12 թեկնածուական ատենախոսություններ:

Հարկ է նշել, որ նույնիսկ պետական ատյաններում աշխատելու տարիներին Ա.Տ.Ասլանյանը շարունակում էր զբաղվել երկրաբանական խնդիրներով, ակտիվ մասնակցում էր երկրաբանական Միջազգային կոնգրեսների, կոնֆերանսների, խորհրդակցությունների աշխատանքներին (Ֆրանսիա, Գերմանիա, Չեխոսլովակիա, Բելգիա, Դանիա և այլուր), որտեղ հանդես էր գալիս փայլուն զեկուցումներով և ելույթներով: Նա վայելում էր մեծ հեղինակություն գիտնականների լայն շրջաններում, ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ արտասահմանում: Ակադեմիկոսներ Վ.Լ. Բարսուկով, Ն.Պ. Լավյորով, Վ.Ե. Խային, Վ.Ի. Կեյլիս-Բորոկ, Ա.Լ. Յանշին, Ս.Ա. Սիդորենկո՝ ահա երկրաբանության տարբեր ոլորտների ճանաչված գիտնականների ոչ լրիվ ցանկը, որոնց հետ նա ուներ սերտ գիտական կապեր և որոնք բարձր էին գնահատում Ա.Տ.Ասլանյան գիտնականին:

Ա.Տ.Ասլանյանը Նյու-Յորքի ակադեմիայի անդամ էր, երկու անընդմեջ ժամկետ եղել է՝ մոլորակագետների Միջազգային ասոցիացիայի փոխպրեզիդենտ, ԽՍՀՄ ԳԱ Անդրկովկասի չորրորդական ժամանակաշրջանի ուսումնասիրության հանձնաժողովի նախագահ, ԵԳԻ մասնագիտական խորհրդի նախագահ, ՀԳԱ Գիտություններ Երկրի մասին ամսագրի գլխավոր խմբագիր:

Ա.Տ. Ասլանյանի գործունեության արդյունքները արժանացել են բարձր պետական պարգևների՝ Հայրենական Մեծ պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանների շքանշան, Աշխատանքային Կարմիր Դրոշի երեք շքանշան, ժողովուրդների բարեկամության շքանշան, բազմաթիվ մեդալներ: Նա պարգևատրվել էր Գերմանիայի Երկրաբանական ընկերության Աբրահամ Գոտլիբ Վերների անվան Արծաթե Պատվո մեդալով, ՍՍՀՄ Աշխարհագրական ընկերության Սեմյոնով-Տյանշանսկու անվան մեդալով:

Ա.Տ.Ասլանյանը կյանքից հեռացավ 1989թ. մարտի 17-ին: Նա մինչև իր կյանքի վերջին տարիները չէր պատկերացնում կյանքը առանց դաշտային աշխատանքների, միշտ պատրաստ էր մեկնել դաշտ և տեղում լուծել վիճելի հարցերը, իր գիտելիքներով և խորհուրդներով օգնելով երիտասարդ գործընկերներին: Միևնույն ժամանակ, եթե նոր տվյալների հիման վրա առաջ էին քաշվում նոր պատկերացումներ այս կամ այն հարցի վերաբերյալ, ապա նա ծանոթանալով բերվող փաստարկների իսկության հետ, ի տարբերություն որոշ հեղինակավոր երկրաբանների, կարող էր փոխել նույնիսկ իր իսկ տեսակետը:

Ա.Տ. Ասլանյանը չափազանց հետաքրքիր զրուցակից էր, փայլուն գիտեր Հայաստանի պատմությունը, ճարտարապետությունը, գրականությունը: Բոլորը, անկախ մասնագիտությունից, ով շփվում էր նրա հետ, զարմանում էին տարբեր բնագավառներում նրա խորը գիտելիքներով և ֆենոմենալ հիշողությամբ: Նա սիրում էր կյանքը իր բոլոր դրսևորումներով, գնահատում էր զրուցակցի պրոֆեսիոնալիզմը և

ուրախանում ուրիշների հաջողություններով, պատրաստ էր օգնել նրանց, ովքեր տարբեր, այդ թվում անձնական խնդրանքներով դիմում էին իրեն: Միևնույն ժամանակ Ա.Տ. Ասլանյանը չէր տանում երկերեսությունը և հեռու լինելով դիվանագիտական խաղերից, առանց թաքցնելու հաճախ արտահայտում էր իր կարծիքը այս կամ այն երևույթի կամ անձի նկատմամբ:

Գիտաժողովի հարգելի մասնակիցներ: Այսօր նշելով Ա.Տ.Ասլանյանի ծննդյան 100-ամյակը՝ մենք հարգանքի տուրք ենք մատուցում բազմավաստակ գիտնականին, պետական գործիչին և քաղաքացուն: Կարելի է համոզված լինել, որ ակադեմիկոս Ա.Տ.Ասլանյանի հիշատակը միշտ վառ կմնա բոլորի մոտ, ում բախտ է վիճակվել ճանաչել և աշխատել նրա հետ, իսկ նրա հարուստ գիտական ժառանգությունը, դեռ երկար տարիներ կծառայի երկրաբանների ներկայիս և գալիք սերունդներին:

А.Т. АСЛАНЯН – ВЫДАЮЩИЙСЯ УЧЕНЫЙ И ГОСУДАРСТВЕННЫЙ ДЕЯТЕЛЬ[x)]

Мелконян Р.Л.

Резюме

В связи со 100-летием со дня рождения академика А.Т. Асланяна, приводятся сведения о его многогранной научной и государственной деятельности. Акцентируются достижения А.Т. Асланяна в области региональной геологии и тектоники, большой геофизики и планетологии, в государственных структурах.

A. T. ASLANYAN – AN OUTSANDING SCIENTIST AND STATE FIGURE[1]

Melkonyan R. L.

Abstract

In connection with the 100th anniversary of Academician A. T. Aslanyan, evidence is provided on his versatile scientific and state activity. A. T. Aslanyan's achievements in the field of geology and tectonics, large-scale geophysics, and planetology, as well as his activity at state structures, are emphasized.

---

x) Доклад на научной сессии, посвященной 100-летию со дня рождения академика А.Т. Асланяна (07.02.2019г. Ереван)

1 Contribution to the scientific session dedicated to the 100th anniversary of academician A. T. Aslanyan (07.02.2019, Yerevan)